№ 102 Յուլիսի 30 Հաբաթ 1883 Յուլիսի 30 Հաբաթ № 102

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Երկրագործական գործիքների փորձեր Թիֆլիսի շրջակայքում։ Նամակ Նիժնի-Նովգորոդից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Կալոմէայի Դօն-Ժուանը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՓՈՐՁԵՐ ԹԻՖԼԻՍԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ

—

Թիֆլիսի Գիւղատնտեսական ընկերութեան կարգադրութեամբ, յուլիսի 5-ին, երեքշաբթի օրը, Մուշայիդից 3 վերստ հեռու գտնվող Ալէքսանդերսդորֆ ասված գերմանական դաղթական գիւղի մօտ կատարվեցան հրապարակական փորձեր կատարելագործված երկրագործական մեքենաների և գործիքների։—Գիւղատնտեսական ընկերութիւնը Կովկասի արդիւնաբերութիւնը բարւոքելու և ծաղկեցնելու մի գլխաւոր պայմանը համարելով ազգաբնակութեան մէջ կատարելագործված երկրագործական գործիքների մտցնելը և տարածելը՝ իր ընկերութեան սուղ միջոցներից նշանակել էր 1500 բուբլ, որից 1000-ը երկրագործական գործիքներ ձեռք բերելու և 500-ը տեղափոխելու և այլ ծախքերի համար։ Որովհետև ընկերութեան նպատակն էր գործնականապէս ցոյց տալու այս և այն գործիքի առաւելութիւնը, վասն որոյ փորձերը հրապարակական էին։ Ընկերութիւնը իր առաջին փորձերը կատարեց ներկայ տարվայ մայիսի 7-ին, Գօրիի մօտ, Կասպի գիւղում, որտեղ հետաքրքրվողների թիւը աւելի շատ էր և յուլիսի 5-ին նա կատարում էր երկրորդ հրապարակական փորձերը։—Դեռ նախընթաց օրը, ընկերութիւնից ընտրած 7 հոգուց մանաժողովը, ընկերութեան նախագահ և եռանդուն գործող պ. Յովհաննէս Խատիսեանի առաջնորդութեամբ սարքել էր հարկաւոր մեքենաները և գործիքները դրօշակներով և տերևահիւս պսակներով զարդարած հանդիսում և ամբողջապէս այդ օրը զբաղվել էր նախապատրաստական փորձերով։ Փորձերին ներկայ էին Թիֆլիսի մօտակայ Ախալսօփել, Լիլօ, Նօրիա և Մարտաղօբ գիւղերից երկրագործ վրացիներ իրանց ադամական գուլթաններով, տանուտէրերով, և գաւառական գլխաւորներով, իսկ Թիֆլիսից գնացողների համար Մուշայիդի մօտ կանգնած էին գերմանական ֆուրգօններ և 10 կոպէկով հասցնում էին իրան տեղը։ Հանդիսում դուրս էր բերված Բանսօմի (անգլիական), Հովարդի (անգլօ-բոլգարական) և Հենի (գերմանական) գուլթանները, կասող, հողմահար, յարդակոտոր մեքենաները շօֆգերի և Շրանցի (Վիէննայում), ջաղացներ, մեղուաբուծական գործիքներ, գինեգործական „անտիսպիր“ ասված մամուլը և այլն։ Գործիքների մի մասը պատկանում էր Գիւղատնտեսական ընկերութեանը, իսկ միւս մասը այստեղի „Ինդուստրիա“ ֆիրմայով երկրագործական գործիքների գործակալութեանը։ Ընկերութեան մանաժողովի, գիւղացիների և Թիֆլիսից գնացած փոքրաթիւ հետաքրքրվողների ներկայութեամբ, առաւօտեան ժամի $8^1/_4$-ին սկսվեցան փորձերը։ Բանում էին վրաց գուլթանների հետ վերոյիշեալ երեք տեսակ գուլթանները 10 տարի անվար և բաւականին կոշտ հողի վրա։ Մի որ և է գուլթանի առաւելութիւնը իմանալու համար, հարկաւոր է ի նկատի ունենալ՝ թէ նրա քաշելու համար որքան ոյժ է հարկաւոր և այդ ոյժի համեմատ ի՞նչ լայնութեամբ և խորութեամբ հող է կտրում նորա խոփը։ Հասկանալի է, որ այն գուլթանը աւելի կատարելագործված և աւելի օգտակար կարող է համարվել, որը աւելի քիչ ոյժով համեմատաբար աւելի խորը և աւելի լայն տարածութեամբ կը կտրէ հող։ Թէպէտ և կարելի էր այդ ոյժը իմանալ եզների կամ ձիաների լուծով, բայց դա ճիշդ չէ կարող համարվել, քանի որ ամեն ձի կամ եզը հաւասար ոյժ չէն ցոյց տալիս, այնպէս որ՝ եթէ մէկ գուլթանի համար հարկաւոր եղաւ 3 լուծ եզը, իսկ միւսի համար 2, ապա կարող է պատահել, որ վերջին երկու լուծ եզը աւելի ուժեղ լինելով, առաջին 3 լուծի չափ ոյժ ցոյց տան։ Այս է պատճառը, որ ընկերութիւնը աւելի հեշտ եզրակացութիւն կազմելու համար բերել էր տուել Վիէննայից ուժաչափ ասված գործիքը (դինամոմետր), որը կապելով գուլթանի կեռ ղեկին (գուլթանի էշ) կից շրջթայից՝ մատեմատիքական ճշգրտութեամբ միջոց ունէր իմանալու այս և այն գուլթանին հարկաւոր ոյժը։ Վերոյիշեալ փորձերը ցոյց տուին, որ եւրոպական գուլթանները անհամեմատ աւելի բարձր են վրաց գուլթաններից. այնպէս որ՝ առաջինների համար միջին թւով մօտաւորապէս 30 պուդ ոյժ հարկաւոր եղաւ, իսկ վրաց գուլթանների համար 60 պուդ։ Երեք տեսակ գուլթաններից մանաւանդ աւելի յաջող դուրս եկաւ Հենի գուլթանը։ Պէտք է իմացած, որ Հենը երկու տեսակ գուլթան ունի՝ հարաւային Ռուսաստանի (Новороссійскій) և գերմանական (колонистскій) 1, 2 և 3 №-ի։ Մեր ասածը առաջին տեսակի № 3-ն է և վրան ունի նշան H. P. երկրորդ տեսակի նշանն է Ѣ. Հենի գուլթանի համար հարկաւոր եղաւ մօտաւորապէս 32 պուդ ոյժ և կտրում էր $5^1/_2$ վերշոկ խորութեամբ և 9 վերշոկ լայնութեամբ հող. Հովարդինը 31 պուդ ոյժով կտրում էր $5^1/_4$ վերշոկ խորութեամբ և 8 վերշ. լայնութեամբ, իսկ Բանսօմինը 34 պուդ ուժով $4^1/_4$ վերշ. խորութեամբ և 7 վերշոկ լայնութեամբ։ Գուլթանների հետ բաւական երկար միջոց փորձեր անելուց յետոյ մանաժողովը զբաղվեց գլխաւորապէս կասող և հողմահար մեքենաներով։ Հանդիսում ձիաշարժ վիէննական կասող մեքենան էր. կար և անգլիական շոգեշարժ։ Այդ մեքենան խուրձերի հասկերից բաժանում է ցորենը թեփով մի կողմը և ծղոտը միւս կողմը և այն այնպիսի արագութեամբ, որ մեր գիւղացիների կամը հազիւ թէ կարողանայ մէկ օրում այնքան գործ կատարել, որքան նա մի ժամումը։ Թեփով ցորենը այնուհետև ածում են քամու տալու համար հողմահար մեքենայի մէջ, որը ազատում է ցորենը թեփից։ Հողմահար մեքենան մանաւանդ այն տեղերում արդիւնաւոր է, որտեղ քամի չը լինելով խուրձերը շաբաթներով ֆնում են կապած, առանց քամու տալու և յաճախ անձրևից փտում և ֆնասվում են։ Կասող մեքենայից գոյացած ծղոտները յարդ (գարման) շինելու համար կար առանձին յարդակոտոր (саломорѣзки) մեքենայ, որը մանրացնում էր միայն յարդը. այդ մանրացած յարդը, ինչպէս գիւղացիք էլ նկատեցին, անյարմար էր իբրև կերակուր գործ ածել անասունների համար, որովհետև մեքենան միայն կտրատում էր, բայց չէր ջարդում, կակղացնում։ Սորա համար, ինչպէս յետոյ ընթերցողը կը տեսնէ, կայ առանձին յարդափշուր (саломотрясъ) ասված մեքենայ, բայց դորանից հանդիսումը չը կար։ Գինեգործական „անտիսպիր“ ասված մամուլը բաժանում է խաղողի հիւթը և 1 ժամում մղում է 30 դոյլ (վեդրօ) ջուր կամ հիւթ (շիրա)։ Ձեռաշարժ ջաղացը 1 ժամում 1 պուդ ալիւր է աղում 4 տեսակ մանը և խոշոր թեփեր բաժանելով առանձին առանձին արկղներում։ կար և մամը մեղրից զատող մեքենայ, բայց վերջին գործիքները առանձին ուշադրութիւն չը դարձրին իրանց վրա։ Փորձերը, չը նայելով օրթագին եղանակին, շարունակվեցան մինչև ժամի $1^1/_2$-ը, մանաժողովի անդամները ամենայն յօժարութեամբ բացատրութիւններ էին տալիս հետաքրքրվողներին, այնուհետև աշխատանքը $2^1/_2$ ժամ ընդմիջվեցաւ։ Հանդիսականները հանդիսատառան հանդիսին կից գերմանացի her Եակօբի

ԿԱԼՕՄԷԱՅԻ ԴՕՆ-ԺՈՒԱՆԸ

—

Գալիս է վաճառականը, կարգով բաց է անում իր վաճառքը։ Բոլորը շատ լաւ է, էժան է, նոր մօդայի համեմատ է։ Ի՞նչպէս սկսում է բազար անել կինս։ Հրէան միայն հառաչանքներ է արձակում։—Խիստ էք, տիրուհի, ասում է նա և համբուրում է նրա արմուկը։ Գնում եմ ես քաղաքը։ Ցեսնում եմ, մեն է գալիս ազնուականների առաջնորդի կինը կապոյտ հագուստով, զարդարած սպիտակ խատուտիկներով։ Ես էլ առնում եմ կընոջս համար կապոյտ հագուստներ սպիտակ խատուտիկներով։ Իմ Նիկօլան կարմրում է։ Գնում եմ ես Բրօդ, բերում եմ զանազան տեսակ թափչներ, մետաքսեայ գործուածներ, մազեղէններ,—և ինչպիսի մազեղէններ։ Նրա սիրտը թռթռում է ուրախութիւնից։ Ե՞ինչ լաւ հագնվում էր նա։ Արժան էր ծունր իջնել նրա առջև։ Նա ունէր մոյգ-կանաչագոյն թիկնոց, մի սիրուն և քնքոյշ կանաչ գունով, և սկիւռի մորթուց շրջապատով. մոխրագոյն սկիւռի շրջապատը մի թիզ լայնութիւն ունէր և Սիբիրիայի սկիւռներից էր։ Պատահում էր, որ երկար զիշերներում նա պառկած էր լինում զիւանի վրա, դնելով ձեռքերը գլխի տակ, իսկ ես նստած եմ նրա մօտ բազկաթոռի մէջ և լսելի ձայնով կարդում եմ նրա համար։ Բուխարու մէջ կրակը ճարճատում է, սամօվարը չչնչում է, ծղրիդը ճրճրում է, մուկը մի ինչ-որ բան կրծոտում է անկիւնում, իսկ ծոյլ կատուն հանդարտ թաւալվում է գորգի վրա։ Ես կարդում եմ նրա համար բոման։ Գաւառական քաղաքում, գիտէք, արդէն կար գրադարան, կամ վեր էինք առնում հարևաններից. երբեմն մէկի մօտ, երբեմն միւսի մօտ գտնվում էր մի բան կարդալու։ Նա կիսախուփ աչքերով պառկած է, իսկ ես նստած եմ բազկաթոռի մէջ, և մենք միասին կլանում ենք գիրքը։ Երբեմն նստած էինք լինում մինչև խորին գիշեր, և անդադար շատախօսում էինք միմեանց հետ։ Եթէ գրքի մէջ նկարագրվում էր մի որ և իցէ, իմանում էք, այնպիսի վարմունք, Նիկօլան կարմրում էր, բարկանում էր, պառկած տեղից բարձրանում էր, ձեռքերը զնում էր ծնկների վրա և ասում էր ինձ. տես, այդպիսի բաներ պէտք է չը լինեն մեր մէջ, լսո՞ւմ ես,—և համարեա լաց էր լինում։ Կարծես թէ, ես զրած լինէի գիրքը։ Գիտէք, կանայք զարմանալի մեծահոգի են բոմանների մէջ։ Երևակայեցէք, նրանք միշտ պատրաստ են իրանց անձը զոհել, երբ որ նրանց սիրած ադամարդը վտանգի մէջ է։ Միանգամ նկարագրվում էր մի տեսարան, որի մէջ կինը զոհում էր իր ամուսնին իր տղային ազատելու համար։ Պէտք է ասած, մի յիմար պատմութիւն էր. կարծեմ, գիրքը կոչվում էր «Մայրական սիրոյ զօրութիւնը», չատ յիմար գիրք, բայց իմ Նիկօլան տենդային դրութեան մէջ էր և երկար չէր կամենում նայել գրքի վրա։ Հենց որ ես սկսում եմ կարդալ, նա խլում է ինձանից գիրքը, շպռատում է իմ երեսին և լեզուն ցոյց է տալիս։ Սկսում ենք այդ ժամանակ երեխաների նման վազվզել միմեանց ետևից։ Ես թաղչում եմ գրան ետևում և վախեցնում եմ նրան։ Իսկ նա հնարում է իմ դէմ ուրիշ զանազան ֆանդեր։ Գնում է իր սենեակը և ասում է ինձ. երբ ես կը վերադառնամ, դու կը լինես իմ ստրուկը, նայիր, չը մոռանաս այդ։—Հագնվում է սուլթանուհու նման, կապում է շալէ գօտի, մի այլ շալից թիւրբէնդ է շինում գլխի վրա, խրում է գօտու մէջ իմ չէրքէզի խէնջարը, փաթաթվում է սպիտակ սփածանելիքի մէջ, վերադառնում է իմ մօտ և սկսում է բռնակալի եղանակով հրամաններ կարդալ ինձ։ Ի՞նչ կին էր։ Աստուածութիւն, և ոչ թէ կին։ Երբ նա քնում էր, ես ամբողջ ժամերով կարող էի նստել նրա մօտ և նայել, թէ որպէս շունչ է քաշում նա. իսկ եթէ նրա կուրծքից դուրս էր թռչում որ և է հառաչանք, իմ սիրտը սկսում էր մռմռալ, որպէս թէ ես նրա վերաբերութեամբ սաստիկ անիրաւութիւն գործած լինէի. յանկարծ տիրում էր ինձ մի անբացատրելի երկիւղ. ես երևակայում էի, թէ նա մեռաւ, թէ նա այլ ևս իմը չէ։ Բայց երբ կանչում էի նրան, նա իսկոյն բարձրացնում էր գլուխը, լայն բացած աչքերով նայում էր իմ վրա և ժպտում էր։ Սուլթանուհու դերը բոլորից աւելի յաջողվում էր նրան. ոչ մի մկնակ չէր շարժվում նրա երեսի վրա։ Երբ ես ընկնում էի հանաքներ անել, նա խոժոռում էր յօնքերը և աչքերով սաստում էր ինձ, այնպէս որ, ինձ թւում էր, թէ ես արդէն կապված եմ սինի վրա։ Ի՞նչ պէտք էր արած, ես պէտք է խոնարհվէի, որպէս մի ստրուկ, և նա անում էր ինձ հետ ամեն ինչ, ինչ որ կամենում էր։ Այսպէս ապրում էինք միմեանց հետ, և որպէս մի զոյգ ծիծեռնակներ, նստում էինք երկուսս միասին և ճլվլում էինք։ Քաղցր յոյսը խոստանում էր մեզ նոր ուրախութիւններ։ Բայց որքան երկիւղ էի կրում նրա մասին։ Ես փայփայում էի նրա ծամերը, և արտասուքը թափվում էր իմ աչքերից։ Նա հասկանում էր ինձ, գրկում էր իմ պարանոցը և համբուրում էր։ Այդ բոլորը պատահեց անսպասելի կերպով, ինչպէս մի բախտաւորութիւն։

տանը, որը ժամանակաւոր հիւրանոց էր փոխարկել և իսկ հայկական բաժիններով կերակրում էր ցանկացողներին: Այդ օրը գերմանական փոքրիկ գիւղը մեծ կենդանութիւն էր ստացել անակնկալ հիւրերի շնորհով. հանդիսականների մէջ մինչև անգամ հայ տիկիններ և օրիորդներ էլ կային: Ուղիղ ժամի 4-ին վերսին սկսվեցան փորձերը դարձեալ գլխաւորապէս գութանների, կասող և հողմահար մեքենաների հետ. վերջը դուրս բերին եւրոպական ցաքանը (տափանը) քառակուսի երկաթներից շինած, որով ցանած սերմը ծածկվում է հողով. այս գործիքի հետ փորձը նոյնպէս յաջող համարվեցաւ: Գերմանացի գաղթականները, որոնք վառ հետաքրքրութեամբ հետևում էին այս փորձերին, չը համբերեցին և գիւղից դուրս քաշեցին իրանց գութանը. ո՞րքան ուրախացան նրանք, երբ իրանց ձեռքով շինած գութանը աւելի յաջող և շատ աւելի արդիւնաւոր դուրս եկաւ վրաց գութաններից: Հանդէսը վերջացաւ երեկոյեան ժամի 7-ին և հանդիսականները ֆուրգոններով վերադարձան Թիֆլիս: Ի դէպ է յիշել այստեղ, որ ընկերութիւնը մտադիր է իր երրորդ փորձերը կատարել Ախալքալաքում, որից խորհուրդ կը տանք մեր հայ գիւղացիներին օգտվել: Մենք վերևը մոռացանք ասել, որ շենի գութանը № 3. Н. Р. արժէ Թիֆլիսում 52 ռուբլ. նոյնպէս թանգ չէ և արդիւնաւոր է հովարդի անգլո-բելգարական գութանը. առաջ այս գութանը գործ էին ածում Բելգարիայում, անգլիացի հովարդը վերցնելով դորան կատարելագործեց և անուանեց անգլո-բելգարական, 60 ռուբլուց թանգ չէ Թիֆլիսում. իսկ Բանսոմի գութանը, չը նայելով որ շատ հիանալի կերպով շուռ էր տալիս հողը, ծանր է և բարդ կազմութիւն ունի, արժէ 85 ր. Թիֆլիսում: Վրաց գիւղացիները, որոնք կանչված էին իրանց տանուտէրերի հետ փորձով համոզվելու եւրոպական գութանների առաւելութեան մէջ, բաւականի սառն կերպով վերաբերվեցան այդ փորձերին և չէին կամենում բաժանվել իրանց նահապետական գութաններից: Գլխաւոր պատճառն այն էր, որ նոքա վախենում էին կոտրվելուց. „ո՞վ պէտք է կարկատէ, եթէ կոտրվի. մենք վարպետ ո՞րտեղ ճարենք, իսկ մենք մեր գութանները ինքներս ենք կարկատում և նորոգում“ ասում էին վախկոտ գիւղացիները, մոռանալով միանգամայն, որ ինչտեղ կը յայտնվի պահանջ վարպետների, այնտեղ և եթ տասնեակներով կը լոյս ընկնեն այդպիսիք: Ի՞նչ կը նշանակէ արհեստ չիմանալ. մի հասարակ բանի կոտրվելուց նոքա աւելի լաւ են համարում 1 օրվայ գործը 10 օրում կատարել: Կասկած չը կայ, որ այսպիսի գանգատները անտեղի են. բաւական է մի անգամ ընտելանալ և այնուհետև, ինչպէս փորձերը ցոյց են տուել, ամեն գիւղացի կը շտապի ձեռք բերել այդպիսի գութան:

Մեծ կարևորութիւն տալով մի երկրի գիւղատնտեսական յառաջադիմութեանը և մի ժողովրդի անտեսական վիճակի զարգացմանը, մենք ցաւում ենք, որ մեր գրութեան մէջ չենք կարող լինել աւելի բազմակողմանի այս անգամ: Մենք կը սպասենք գիւղատնտեսական ընկերութեան զեկուցմանը և եզրակացութեան իր փորձերը վերջացնելուց զկնի և կը հաղորդենք ընթերցողներին գիւղատնտեսական կարևոր խնդիրների վերաբերութեամբ ընկերութեան եզրակացութիւնները: Բայց մինչև այդ, հետևեալ համարում մենք առիթ ունենք խօսելու գիւղատնտեսական կանոնաւոր կուլտուրայի և գիւղատնտեսական գիտութեանց տարածման վերաբերութեամբ, յուսալով որ մեր մանաւոր գիւղատնտեսները իրանց սրտին մօտիկ կը համարեն երկրի արդիւնաբերութեան և ժողովրդի անտեսական զարգացման ամենակարևոր հարցերը և կը նուիրեն մամուլի միջնորդութեամբ ևս կանոնաւոր և գործնական կերպով մշակելու և լուծելու այդպիսի հարցեր մանաւանդ մեր ազգաբնակութեան պայմանների նկատմամբ: Առանց այդ պայմանի, առանց ժողովրդի երկրագործական կուլտուրայի զարգացման և նորա տնտեսական վիճակի բարվոքմանի բարելաւութեան, անհնարին է մտածել և սպասել անարգել և ցանկալի յառաջադիմութեան նոր հողևոր կեանքի:

Կ. Թէմ.

ՆԱՄԱԿ ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴԻՑ

—

Յուլիսի 20-ին

Յուլիսի 15-ին տօնավաճառի մայր եկեղեցում, Նիժնի-Նովգորոդի նահանգապետ գեներալ Նիկոլայ Միխայլովիչ Բարանովի, բօրսային կոմիտեի նախագահի, քաղաքագլխի, վաճառականական դասի ներկայացուցիչների և մի քանի պատուաւոր քաղաքացիների ներկայութեամբ մաղթանք կատարելուց յետոյ, բոլորը միասին ուղևորվեցան Օկա (Ока) գետի ափը, ուր դարձեալ մաղթանք կատարելով, եկեղեցական հանդիսաւոր ծիսակատարութեամբ բարձրացրին տօնավաճառի դրօշակը, որով և տօնավաճառը պաշտօնապէս սկսվեցաւ: Այդ նշանաւոր հանդիսին մասնակցողները յետոյ դիմեցին տօնավաճառի գլխաւոր տունը (Ярмарочный главный домъ) որտեղ այժմ (տօնավաճառի ժամանակ) ընակվում է նահանգապետը, որը այդտեղ շնորհաւորելով բոլոր հանդիսականներին տօնավաճառի սկսվելովը, յաջող ընթացք և բարի վախճան բարեմաղթեց և մի քանի ազդու խօսքերի մէջ 'ի միջի այլոց ևս յայտնեց, որ կը ցանկանար տօնավաճառը տեսնել իր բառի բուն նշանակութեան համապատասխանող և ոչ այնտեղի քէֆերի բուն և վերջն էլ աւելացրեց, որ ինքն պատրաստ է ամեն կերպ աշխատելու միջոցներ գտնել տօնավաճառի բարելաւութեան և յառաջադիմութեան համար, որ իր դռները գիշեր և ցերեկ միշտ բաց կը լինեն իրան որ և է բանով դիմողների համար և յոյս է տածում, որ վաճառականական դատ էլ իր կողմից չի խնայի իրանից կախված միջոցներով օգնել այդ նպատակին հասնելու համար:—Նահանգապետի այդ խօսքերին տօնավաճառի բօրսային կոմիտեի նախագահը պատասխանեց, որ վստահ են նորին վեհութեան եռանդոտ գործունէութեան վրա, որը և հաստատ գրաւական է տօնավաճառի գործերի յաջող ընթանալուն:

Այդ հանդիսից յետոյ բոլորքեանք հրաւիրվեցան նոյն տան մի մեծ դահլիճում պատրաստված նախաճաշիկին, որ ի պատիւ տօնավաճառի բացվելուն պատրաստել էր բօրսային կոմիտեի նախագահը: Այդտեղ մասնակցում էին, բացի վերև յիշած յարգելի անձերից, և ուրիշ շատ պաշտօնական մարդիկ, որպէս են փոխ-նահանգապետը, նահանգի կառավարիչը և այլն: Սեղանի վրա նահանգապետը առաջին տօստը առաջարկեց Նորին Կայսերական Մեծութեան տան բարօրութեան կենացը, որը ջերմեռանդ «ուրաներով» ընդունվեցաւ և յետոյ բոլորքեանք միաձայն ցանկութիւն յայտնեցին հեռագրով շնորհաւորել Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչի անուանակոչութեան տօնը, որը իսկոյն և եթ կատարվեցաւ և որին էլ յետոյ շնորհակալութեան պատասխան ստացվեցաւ:

Ուրեմն տօնավաճառը այժմ պաշտօնապէս բացված է. սակայն դեռ ոչ առնող և ոչ ծախող կայ: Առնողներից դեռ համարեա ոչոք չէ եկել, իսկ ծախողներից մի ամենաչնչին մասն են եկած, տեղաւորում են ապրանքները, իսկ մնացածները փակ մնում են:—Անցեալ տարի վաճառականութիւնը դժգոհ էր տօնավաճառի ընթացքից, բայց այս տարի տեսնելով ներկայիս դրութիւնը, դարձեալ փառք է տալիս անցեալին:

Տօնավաճառի բիւդժէտը այս տարի 900,000 ռուբլիով աւելացրած լինելու պատճառով, այստեղի վաճառականների վրա էլ հարկեր են աւելացված: Իւրաքանչիւր մեծ քանակութեամբ ծախս անող վաճառական պարտաւոր է առնել առաջին գիլդիայի վկայական 110 ր. արժողութեամբ, իսկ փոքր քանակութեամբ ծախս անող 2-րդ գիլդիայի, որ արժէ 27 ր. 50 կ. իսկ խանութում գործակատարների համար թէ առաջինը և թէ երկրորդը պէտք է առնեն և «прикащичье» վկայական, մէկի համար 1-ն կարգի 6 ր. 60 կ., իսկ մնացածների համար 2-րդ կարգի 2 ր. 20 կ. արժողութեամբ:

Չը նայած, որ այդ հարկերը եկող տարուան թողնելու համար այստեղի վաճառականութիւնը քանի մի անձինքներից բաղկացած մի յանձնաժողով է ուղարկել նախարարութեանը խնդրելու, որի հետևանքի մասին դեռ ոչինչ լուր չը կայ, սակայն եկող վաճառականները հետզհետէ առնում են վերոյիշեալ վկայականները:

Մոսկվայից և Ս. Պետերբուրգից այստեղի ոստիկանութեան օգնութեան ուղարկված են մինչև 200 ոստիկաններ:

Օրամէջ տեղող անձրևների շնորհիւ այստեղի օդը բաւական մեղմ է անցեալ տարվանից: Այս տարի բացված է այստեղ մի նոր բժշկանոց (лечебница) որտեղ ձրիապէս ընդունվում են ամենատեսակ հիւանդներ, իսկ միջոց չունեցողներին դեղօրայքն ևս ձրի են տրվում:

Պարսկաստանի մրգեղէններ մեծ քանակութեամբ ստացված են արդէն, բայց առնողների բացակայութեան պատճառով դեռ գները չեն որոշված:

Այս տարի համեմատաբար անցեալ տարվայ հետ շատ մեծ քանակութեամբ երկաթեղէն է բերվում ներքին գործարանների արտադրութիւնից. նշոյլներից ինչպէս երևում է լաւ ծախք պէտք է ունենայ. գները առ այժմ անցեալ տարուանն են, շատ անշան տարբերութեամբ:

Բաղուի նաւթը ևս մեծ առատութեամբ թափված է այստեղ, բայց դարձեալ յայտնի գին չը կայ. ասում են 80—82 կոպէկ է պուդը տալառով:

Յովհաննէս Ստեփանեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ տեղային առաջնորդ Յովհաննէս վարդապետ Երեմեանցը տեղային երկսեռ դպրոցների հոգաբարձութեան հետ միասին աշխատում է ապահովել յիշեալ դպրոցների նիւթական դրութիւնը և այդ մասին ստորագրութիւն է սկսել, և նուիրատուները մեծ յօժարութեամբ ցանկանում են բարեկարգ դրութեան մէջ տեսնել իրանց դպրոցները: Այս տարի յիշեալ դպրոցների հարցաքննութիւնները յաջող են անցել. մանաւանդ օրիորդաց դպրոցի աշակերտուհիները մեծ յաջողութիւն են ցոյց տուել:

—

Մեզ հաղորդում են ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ, որ այս տարի յորդ անձրևներ յաճախ են պատահում այստեղ: Ցաւալի է, որ հացի դինը կէժանանայ: Սակայն դաւառում մի տեսակ հիւանդութիւն կայ, որ կոտորում է հարիւրաւոր կենդանիներ:

—

Բաչկեղի ուսումնարանի աշակերտները շնորհակալութիւն են յայտնում պ. բժիշկ Արտեմ Իվանիչ Միրիմանեանցին, որը նուիրել է յիշեալ գիւղի դպրոցի գրադարանի անունով հետևեալ գրքերը. 1) Բաֆֆիի հեղինակութիւններից «Խենթը», «Ոսկէ Աքաղաղը», «Ղարաբաղի Աստղիկը», «Կայծեր», «Դաւիդ Բէգ», «Խամսայի Մելիքութիւնները»: Ուրիշ հեղինակութիւններից «Հայ բողոքականի ընտանիքը», «Картины естественной исторій», «Сборникъ избранныхъ басенъ», Григоровичъ «Три разсказа»: Ուսումնարանը

ես չտապեցի բժշկին կանչելու, վերադառնում եմ, իսկ նա արդէն տալիս է իմ գիրկը իր նորամանուկին: Մեր ծնողների հրճուանքին չափ չը կար, մինչև անգամ սպասաւորները շատ ուրախ էին, բոլորը զուարճանում էին, ծիծաղում էին և բոլորը արքեցութեան մէջ էին գտնվում: Միայն կըռունկը համեստաբար կանգնած էր մարգի վրա և մտախոհութեան մէջ բարձրացնում էր իր ոտքը: Այնուհետև մեզ նոր հոգսեր աւելացան. պէտք էր մտածել, խնամք տանել մեր մանուկին, բայց ամեն մի հոգատարութիւն, ամեն մի բազմաբաղ ժամ աւելի ևս կապում էր մեզ միմեանց հետ: Բայց չը մնաց բոլորը այնպէս, ինչպէս որ էր...

Նրա ձայնը զգալի կերպով ցածանում էր, ինձ հասնում էին այժմ մեղմ, հանդարտ հնչիւնները միայն, որոնք նոյնպէս քնքշութեամբ սփռվում էին օդի մէջ, որպէս և նրա չիրուխի թափանցիկ ծուխը:

—Այն վիճակը չէր կարող մնալ այնպէս, ինչպէս որ էր. իմանում էք... ինչպէս բացատրեմ ձեզ: Այդ արդէն ընդհանուր կանոն է... ես կամենում եմ ասել, որ այդ հէնց բնութեան օրէնք է: Ես շատ անգամ խորհել եմ այդ մասին: Ես ունէի մի բարեկամ՝ Լևոն Բօղոչկան: Նա խիստ շատ կարդում էր և մտածում էր, այդ պատճառով էլ աւելի հալվում ու մաշվում էր: Նա ասում էր ինձ—բայց ինչ պէտք է ձեզ նրա ասածը: Ես չեմ կարող...

Նա դուրս հանեց մի քանի թղթի պատառներ, որ թաղցրած ունէր կուրծքի վրա, և որոնք դեղնել էին ժամանակից:

—Բօղոչկանը շատ էլ գրում էր: Թէև նա հրաչակված չէր, բայց կատարելապէս գիտէր ամեն ինչ: Նա այնպէս կը հասկանար ձեզ, որպէս թէ ձեր սիրտը դրած լինէր նրա առջև, ինչպէս մի լեռնային պարզ աղբիւր: Լինում էր, որ նա ժամացոյցի նման բաց կանէր մարդուն և կը նայէր, արդեօք նրա սիրտն ու հոգին կարգին էին, և իսկոյն կասէր, թէ ինչ էր խանգարված այնտեղ: Օրինակ, նա հասկանում էր, թէ ինչ են խօսում միմեանց հետ կատուները, և կասէր, թէ ինչ են ցանկանում նրանք: Երբեմն կը վեր առնէր ձեռքում մի ծաղիկ, կէս կը կտրէր նրան և կը բացատրէր, թէ ինչով է ապրում նա, կամ ինչով է սնանում: Նա մի առանձին յօժարութեամբ մեկնութիւններ էր տալիս կանանց մասին: Սիրում էր իր մտքերը արձանագրել թղթի վրա, յետոյ կը գնար իր համար անտառը և բոլորը դէն կը գցէր: Կարծես թէ այդ գրված թուղթը վրդովեցնում էր նրա սիրտը: Բայց, որպէս զի չը մոռանամ, կասեմ ձեզ. նա միշտ ասում էր ինձ, թէ նա, որ կարող է իր սէրը նկարագրել թղթի վրա, ինքը չէ սիրում: Նա համբերութիւն ունէր մինչև վերջը կարդալ ամենամեծ գրքերը, ամբողջ Նեստորը, բայց փախչում էր սիրահարական նամակից:

Այդ միջոցին նա բաց արեց սեղանի վրա թղթի մի քանի դեղնած պատառներ:

—Ոչ, այդ հաշիւի ցուցակ է—և նա կրկին կոխեց իր ծոցը:—Ահա նրա գրածը:

Նա հազաց և սկսեց կարդալ:

—«Ի՞նչ է այն, որ կոչվում է կեանք:—Զարչարանք, տարակուսանք, երկիւղ և յուսահատութիւն: Ո՞րտեղից եկար դու: Ո՞վ ես դու: Ո՞ւր ես գնում:—Եւ չունենալ ամենափոքր իշխանութիւն անգամ բնութեան վրա, և չը լսել պատասխան այդ ողորմելի, յուսահատական հարցերի մասին: Մարդկային բոլոր իմաստութիւնը վերջի վերջոյ—ինքնասպանութիւն է: Բայց բնութիւնը ստեղծել է մեզ համար մի այլ տանջանք, որը աւելի վատ է քան թէ կեանքը: Այդ տանջանքը—սէրն է: Մարդիկ կոչում են նրան ուրախութիւն, զուարճութիւն»:—Իմ բարեկամը այդ խօսքերի ժամանակ միշտ դառն կերպով ծիծաղում էր:—«Նայեցէք գայլի վրա, երբ որ նա որոնում է իր էգին. ինչպէս ուժգին թափով անցնում է նա անտառային խառութեան մէջ, լորձունքը թափվում է նրա բերանից, նա չէ մռնչում, այլ կաղկանձում է.—մինչ գրանից յետոյ կարելի է սէրը զուարճութիւն անուանել: Դա մի կռիւ է, կռիւ կեանքի համար: Տէր Աստուած: Արդեօք ընդհանուկ չէ՞ և տղամարդը յարձակվել կնոջ վրա, ինչպէս իր թշնամու վրա: Միթէ նոյն ժամում չէ՞ խմանում և տղամարդը, որ ինքը գտնվում է իր անդութ թշնամու տիրապետութեան ներքոյ: Միթէ նա չէ՞ գնում կնոջ ոտների մօտ իր հպարտ գլուխը և միթէ ինքը չէ՞ աղաչում նրան՝ կոխ տուր ինձ, կոխ տուր քո ոտքով, ես պատրաստ եմ լինել քո ծառան, քո ստրուկը, բայց միայն ազատիր ինձ: Այո՛, սէրը տանջանք է, իսկ զուարճութիւնը—ոչ աւելի քան ազատութիւն: Նրանից յետոյ տղամարդը և կինը սկսում են մրցել միմեանց հետ. երկուսն էլ փորձում են իրանց իշխանութիւնը, և կնոջը սիրող տղամարդը անխուսափելի կերպով դառնում է նրա ստրուկը: Հասկանում ես, որ կինը վիրաւորում է քեզ, և նրա բռնակալութիւնից ու խստասրտութիւնից դու խեղդվում ես զուարճութեան մէջ: Համբուրում ես քեզ չարչարողի ոտքը: Խ սիրած կինը երկիւղ է ազդում իմ վրա: Ես սարսափում եմ, երբ նա անսպասելի կերպով անց է կենում սենեակի միջով, և երբ ես լսում եմ նրա հագուստի խշխշոցը: Նրա ամեն մի անակնկալ շարժումը վախեցնում է ինձ: Ցանկալի կը լինեի յաւիտեանս պակվել նրա հետ, ոչ միայն ա

ստանում է նրա հաշվով 1883 թվի «Աղբիւր» ամսագիրը և «Առողջապահական թերթը», որոնց համար պարտաւորվում է ամեն տարի շարունակ նուիրել ի յիշատակ իր հանգուցեալ հօր: Բացի դրանից ուսումնարանը ստացել է պ. բժշկից 25 բուրլ նուէր ի յիշատակ իր հանգուցեալ մօր:

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են, որ մօտ ժամանակներում Թիւրքաց հպատակ մահմետական քրդերը աւազակաց խմբեր կազմելով, շարունակ յարձակումներ են գործում ռուսաց սահմանի վրա եղած եզիդի քրդերի գիւղերի վրա: Սահմանից անցուդարձ անողներին մեծ վտանգ են սպառնում այդ աւազակները: Մայիսի 2-ին Ռուսաստանից դէպի Թիւրքիա գնացող քսան հոգի բանւոր մշակներ սպանվում են յիշեալ աւազակներից:

—

Նոյն տեղից մեզ գրում են, որ անցեալ 1882 թվից մինչև այժմ Սուրմալուի գաւառում բորենին մեծ վնասներ է տուել. 24 հոգի կերել է, իսկ 12 հոգի վիրաւորել է:

—

«Новости» լրագրին հաղորդում են, որ այս օրերս առաջին գիլդիայի վաճառական Պալաչկովսկիին և տոհմային պատուաւոր քաղաքացի Մալիչեվին թոյլատրութիւն տրվեցաւ հիմնել ակցիոներական ընկերութիւն «Բաթումեան նաւթային-արդիւնաբերական և առևտրական ընկերութիւն» անունով, մէկ և կէս միլիոն բուրլ դրամագլխով, բաժանված 1,500 ակցիաների վրա. իւրաքանչիւր ակցիան արժէ հազար բուրլ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կարին, 30 յունիսի

Հայ բանտարգելոց 16 աղատեցան, մնացեալ 38 անձանց վճռուեցաւ պահել բանտի մէջ ոմանց 4 տարի, ոմանց 6, ոմանց 10 և միոյն՝ որ ամենի գլուխը կը կարծուի, այն է Կերէքցեան Խաչատուրին, 15 տարի:

Սոքա մտադիր են դիմել Կ. Պոլսոյ վճռաբեկ ատեանին, յուսալով թէ, գոնեա մաս մը պիտի զեղջուի իրենց բանտարգելութեան տարիներէն, և եթէ այն էլ չը յաջողի, այն ատեն իրենց վերջի յոյսը պիտի մնայ Ներսէս պատրիարքի վրայ ի գութ շարժելու Օսմանիոյ կայսրը և բոլորովին ներումն ստանալու:

Խիստ ցաւալի է ասոնց մեծ մասին և ալ աւելին իրենց գերդաստանների ամենախեղճ վիճակը, որք մոռցած են կարօտ, մոռցած են հանգիստ, մոռցած են ուրախութիւն և միայն չոր հացի մը կը կարօտին, պատառ մը հացով գոհ պիտի լինին որ առժամանակեայ ցաւերը մոռնան, այն էլ չունին:

Երևակայէ մի անդամ, ընթերցող, սոյն բանտարգելոց խեղճ դրութիւնը, յուսահատ վիճակը և իրենց ընտանեաց թշուառ կեանքը, դի մայրը աղջիկնէն, սկեսուրը հարսէն և մանկամարդ կինը իր փոքրիկ զաւակներէն կը պահեն իրենց բանտարգելոյն այնչափ երկար տարեաց թիւը, միշտ յուսադրելով թէ վաղը, կամ գալ շաբաթ պիտի արձակուին, բայց աւաղ, խիստ լաւ հասողուած են թէ մէյմնալ չը պիտի տեսնեն իրենց սիրելիները և ո գիտէ դեռ ևս որպիսի տառապանաց պիտի ենթարկուին:

Սիրտ չի դիմանար լսելով խեղճ մարդ և հարսանց կոծն ու սուգը, աղքատ տղայոց լացն ու արտասուքը, որք հայրերնէն կը խնդրեն իրենց մայրերէն, յաճախ կը հարցնեն թէ երբ տուն պիտի դայ, դի շատ կարօտցած են: Թշուառ կին. դու քեզ մխիթարես, թէ քո աչացդ աղիողորմ արցունքներով զաւակացդ արտօսրը սրբես, դի միայն հայրերնէն չէ որ կուգեն, այլ և քաղցածութիւնից պիտի մեռնինք կըսեն, մայրիկ, և ինչ պիտի ընէ այս թշուառ մայրը, երբ ինքն էլ քաղցած է, տուն չունի դէթ չոր դետնի վրայ պառկարուելու համար, գրպանը ոչ մի ստակ և իր արենակցած սրտի մէջ ոչ մի գութ:

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Յուլիսի 16-ին Փարիզի մէջ կատարվեցաւ, Փարիզ քաղաքի հաշվով, քաղաքային խորհրդարանի անդամ բժիշկ Պոլ Դիւբուայի թաղումը: Թաղմանը ներկայ եղող հասարակութեան թիւը ահագին էր, այնպէս որ շրջակայ փողոցների վրա կառքերի երթևեկութիւնը արգելված էր: Յուղարկաւորութեան դնացքը ուղևորվեցաւ դէպի Պեր-Լաշեզի գերեզմանատունը մինչև 10 ժամը: Պըսակներով ծածկված դագաղին հետևում էին հանգուցեալի երկու աղգականները և պատգամաւոր Կլեմանսօ: Դագաղին հետևում էին մինիստր-նախագահ Ֆերրի, հանգուցեալի հակառակորդ պատգամաւորներ և բազմաթիւ սենատօրներ: Գերեզմանի վրա Մատէ մի ճառ արտասանեց, որով նկարագրեց հանգուցեալ բժշկի կեանքը: Նրանից յետոյ խօսեց հանգուցեալի հակառակորդ պատգամաւոր Բաս: Վերջինը պատմեց, թէ ինչպէս Պոլ Դիւբուա Ֆրանկո-գերմանական պատերազմի ժամանակ օգնում էր վիրաւորվածներին պատերազմի դաշտի վրա: Երկու անդամ նա գերվեցաւ և երկու անդամ նորից վերադարձաւ Ֆրանսիական զօրքերի մօտ, պարապելով ամենավտանգաւոր դիրքերի առաջ: Գամբետտա նրան նշանաւոր պաշտօն առաջարկեց, բայց հանգուցեալը հրաժարվեցաւ և Ֆրանսիական զինուորներին բժշկական օգնութիւն էր հասցնում առաջաւոր դիրքերի մօտ, որտեղ գերմանացիները նրան նորից գերի առան: Հանգուցեալի բոլոր ծանօթները նրան չափազանց սիրում էին: Այդ ճառի վերջանալուց յետոյ Կլեմանսօ մօտեցաւ ճառախօսին և ասեց. «Շնորհակալ եմ, Բաս, ես երբէք չեմ մոռանայ ձեր ասածները: Ամենքս համաձայնութեամբ գործենք հանրապետութեան ապագայի համար:»

—Գերմանական «Nat. Zeitung.» լրագիրը նկատում է. պապական «Moniteur de Rome» լրագիրը մեծ ուշադրութիւն է դարձնում գերմանական քաղաքականութեան վրա: Նորերումս այդ լրագիրը նախազգուշացնում էր Շվեյցարիային երկաթուղիների գերմանական ակցիոներներից, անուանելով նրանց գերմանական գեներալների և դիպլոմատների համար բնակարաններ պատրաստողներ: Այժմ նա իր հայեացքը դցում է Գերմանիայի և Աւստրիայի յարաբերութիւնների վրա և ասում է, թէ աւստրո-գերմանական դաշնակցութիւնը միայն այն ժամանակ նշանակութիւն կունենայ աւստրիական կառավարութեան համար, երբ իշխան Բիսմարկ կարժանանայ պապի գովասանքին: Վիէննայի մէջ, նկատում է լրագիրը, մեծ անհամբերութեամբ սպասում էին, որ պրուսական կառավարութիւնը հպատակվեր պապական կառավարութեանը եկեղեցական-քաղաքական օրէնքների վերաբերութեամբ:

—«Indépendance Belge» լրագիրը հաղորդում է, որ ֆրանսիացիներից, բելգիացիներից և հօլանդացիներից կազմված մի ընկերութիւն կառավարութենից կօնցեսիա խնդրեց Ֆրանսիայի և Հօլանդիայի մէջ երկաթուղի կառուցանելու համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նոյեան տապանի յայտնագործութիւնը: Պօլսից հաղորդում են մայրաքաղաքի լրագիրներին, որ Արարատ սարի խրամատները հետազօտող Թիւրքաց մասնաժողովը այս օրերս պատահմամբ հանդիպեց մի ահագին փայտէ շինուածքի, որը երևում էր այստեղ մի սառցակոյտից:—Արտաքին տեսքից իսկոյն կարելի էր զուշակել, որ նա մի նշանաւոր հնութիւն է: Տեղացի բնակիչները պատմեցին, որ 6 տարի է, ինչ որ իրանք այդ բանը տեսնում էին, միայն չէին համարձակվում մօտենալ, որովհետև վերին յարկի պատուհանից զարհուրելի դէմքով նայում է չար դևը: Թիւրքաց կօմիսարները ի հարկէ չը վախեցան, բարձրացան սառցակոյտի վրա և գտան այնտեղ մի հսկայական նաւ սառած և լաւ պահված: Իսկոյն երևաց, որ այդ Նոյեան տապանն է: Նոյա մէջ կար մի անդլիացի, որը յայտնեց թէ տապանը շինած է մի եղևնիի առանձին տեսակից: Ներս մտան նաւը, չափեցին և տեսան որ 15 ֆուտ բարձրութիւն ունի և բաժանված է մի քանի մասերի, որոնցից 3-ի մէջ կարողացան մտնել, իսկ մնացածները կատարելապէս ծածկված են սառուցով:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 26 յուլիսի: Կրաշեվսկի արձակված է բանտից 30,000 մարկ գրական ներկայացնելուց յետոյ, բայց մնում է պօլիցիական հսկողութեան տակ: Նա ուղևորվեցաւ Դրեզդեն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յուլիսի: Արտաքին առևտրի իսկական շրջանառութիւնը որոշելու համար մաքսային հարկերի բաժինը շրջաբերականով խնդրում է առևտրի և մանուֆակտուրայի տեղական մասնաժողովներից և բօրսային մասնաժողովներից նպաստել ապրանքների աւելի կանոնաւոր գնահատութեանը: Դա առաջին փորձն է այդպէս անուանված առևտրական գների հաւաքման, մի ձև, որ աջողութեամբ գործադրվում է Գերմանիայի, Աւստրիայի, Իտալիայի, Ֆրանսիայի և Բելգիայի մէջ: Երկկ վօդնեսենսկի հրապարակի վրա կառքով գնացող անյայտ մարդիկ մի թիթեղեայ արկղ դուրս գցեցին կառքից, որը լիքն էր այնպիսի բաղադրութեամբ, որ այրվելով խեղդող ծուխ տարածեց: Լրագիրները հաղորդում են, որ նախագիծ է կազմվում ամեն տեղ գիւղական հրդեհաշէջների խումբեր կազմելու և գիւղացիներին ծանօթացնելու համար հրդեհ հանգցնելու տարրական սկզբունքների հետ:

ՊԵՇՏ, 27 յուլիսի: Երկկ այստեղ հակահրէական անկարգութիւններ սկսվեցան, որի պատճառը Շարֆի ընտանիքի դալն էր: Շարֆ տիսսա-էսլարեան դատաստանական գործի մէջ գլխաւոր մեղադրվածներից մէկն է: Ամբոխը աղմուկ էր հանում, կոտրատեց այն հիւրանոցի ապակիները, որտեղ իջել էր Շարֆ: Պոլիցիան ցրվեց ամբոխին:

ԲԷՑՐՈՒՏ, 27 յուլիսի: Այստեղ խօլերայի երկու դէպք է եղել:

ՄԻՆԽԵՆ, 27 յուլիսի: Ուղևորվելով Բերլինտեսհարդենից այստեղ հասաւ Մեծ Իշխան Պավել Ալէքսանդրովիչ:

ԷՐՖՈՒՐՏ, 27 յուլիսի: Սկսվեցաւ Լիւտերի չորսհարիւրամեայ յօբելեանի տօնելը: Գերմանական բոլոր համալսարաններից հասան ուսանողական պատգամաւորութիւններ: Արտաքոյ կարգի գնացքներով անդադար դալիս են տօնին հաղարաւոր մասնակցողներ: Այնուհետև կայացաւ պատմական մի գնացք, որ ներկայացնում էր այն ըոպէն, երբ Էրֆուրտ կայսերական քաղաքը հանդիսով ուղեկցում էր վերանորոգողին, որ ուղևորվում էր Վօրմս կայսերական սէյմին ներկայանալու համար:

ԻՇԼ, 27 յուլիսի: Այստեղ հասաւ գերմանական կայսրը, որին դիմաւորեցին աւստրիական կայսրը և կայսրուհին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յուլիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 50 կ., երկրորդ 94 ր. 50 կ., երրորդ 94 ր. 50 կ., չորրորդ 94 ր. 37 կ., հինգերորդ 94 ր. 62 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ $217\frac{1}{4}$ ր., երկրորդ $213\frac{3}{4}$ ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 62 կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 92 ր. 75 կ., ոսկի 8 ր. 40 կ.: Դուսաց 1 բուրլ Լօնդօնի վրա արժէ $23\frac{11}{16}$ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա $202\frac{1}{4}$ մարկ, Փարիզի վրա $249\frac{1}{2}$ ֆրանկ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

այլ և ապագայ աշխարհում, կը կամենայի հանապազ միացած լինել նրա հետ: Ընկդմում ես քո հոգին ուրիշի հոգու մէջ, մտնում ես ուրիշի թշնամական բնաւորութեան մէջ և ընդունում ես նրանից մկրտութիւն: Ծիծաղելի է թւում, շատ ծիծաղելի, որ միշտ նրա հետ չես եղել: Ամեն մի ըոպէ գողում ես, չը լինի թէ կորցնես նրան: Վախենում ես, երբը նա խփում է աչքերը և երբ նկատում ես փոփոխութիւն նրա ձայնի մէջ: Եւ այսպէս փափագում ես նրա հետ լինել մի անբաժանելի էակ: Յօժարութեամբ արմատախիլ կանէիր քո բոլոր յատկութիւնները, մտքերը, կեանքի իդեալները, նրա համար միայն, որ կատարելապէս լուծվես ուրիշի էութեան մէջ: Անձնատուր ես լինում նրան, որպէս մի տարր: Արա դու ինձանից ամեն ինչ, ինչ որ ցանկանում ես: Ինչպէս ինքնասպանութեան մէջ, այնպէս էլ այստեղ, նետվում ես օտար բնաւորութեան մէջ, մինչև քո սեպհական բնաւորութիւնը չէ վրդովվում: Եւ ահա, յանկարծ սկսում ես դու սարսափի մէջ ընկնել, երբ մտածում ես, որ քո եսը անդառնալի կերպով կորչում է: Քո մէջ զարթնում է ատելութիւն դէպի օտար էակի իշխանութիւնը: Դու պատրաստ էիր մեռնելու, և յանկարծ քո մէջ յայտնվում է ցանկութիւն ընդդիմադրել այդ օտար կեանքի բռնակալութեանը, և նորից անձնիշխան դիրք ստանալ: Հէնց այդ է բնութեան յարութիւնը»:

Նա սկսեց որոնել թղթի մի այլ պատառ:

—«Ցղամարդը ունի իր աշխատանքը, իր հայացքները, ձեռնարկութիւնները և նպատակները: Դրանք չեն դադարում նրա ուղեղը զբաղեցնելուց և, վերջապէս, նրա մտքերին բարձր թռիչքներ են տալիս: Դրանք թոյլ չեն տալիս նրան մշտապէս խորասուզվել օտարի բնաւորութեան մէջ: Իսկ կինը:—Նա օգնութիւն է աղաղակում: Նրա եսը չէ կամենում կորչել, չէ կամենում: Բայց օգնութիւն չը կայ: Եւ ահա նա կրում է իր սրտի ներքոյ օգնութեան նման մի բան, զգում է, թէ ինչպէս նա աճում է, շարժվում է, ապրում է: Վերջապէս նա բռնում է նրան իր ձեռքերի մէջ, բարձրացնում է նրան: Ի՞նչ է կատարվում այժմ: Արդեօք երազ չէ՞ այդ: Մանուկը չչնչում է նրան. ես նոյնն եմ, ինչ որ դու ես. դու ինքդ ապրում ես իմ մէջ. նայէր իմ վրա, և ես կը լինեմ քո փրկիչը:—Մայրը սեղմում է նրան իր կուրծքի վրա—և աղաղակ է: Այն ժամանակ, իր մանուկի մէջ, մայրը սկսում է հոգ տանել իր մասին և նայում է, թէ ինչպէս աճում է նա իր ծնկների վրա, և հետզհետէ տալիս է նրան իր ամբողջ հոգին, և ինքը կայան է գտնում նրա մէջ:»

Իմ խօսակիցը ծալեց իր բարեկամի այդ հատուկոտոր դատողութիւնները և կրկին թաղցրեց իր կուրծքի վրա. միանգամ ևս ձեռքով շօշափեց նրանց, կարծես վախենում էր կորցնել նրանց. յետոյ կոճկեց իր քափթանը:

—Մի և նոյնը պատահեց և ինձ հետ,—դարձեալ խօսեց նա,—կատարելապէս նոյնը: Ի հարկէ, ես չեմ կարող այնպէս լաւ արտայայտել այդ, որպէս Լեոն Բօղոչկանը, բայց, այսու ամենայնիւ, կը պատմեմ ձեզ, թէ ինչպէս պատահեց: Կամենում էք լսել շարունակութիւնը:

—Անտարակոյս:

—Կատարելապէս մի և նոյնը պատահեց և ինձ հետ, կատարելապէս մի և նոյնը:

Ցանկանալով զրգռել իմ նոր բարեկամին, ես սառնասրտութեամբ նկատեցի.

—Սովորաբար ասում են, որ զաւակը սիրոյ ճշմարիտ դրաւականն է:

Իմ խօսակիցը ընդարմացաւ: Նա զայրացաւ, որպէս թէ ես սաստիկ վիրաւորեցի նրան:

—Սիրոյ դրաւական,—գոչեց նա,—այո, էլ ինչ ասել կուզէ, սիրոյ փառաւոր դրաւական է:—Ահա ես վերադառնում եմ տուն: Մի այնպիսի տնտեսութեան մէջ, որպէս իմն էր, սակաւ գործեր չը կան: Վերադառնում եմ յոգնած, ինչպէս մի որսորդական շուն: Գրկում եմ կնոջս. նա ձեռքը քսում է իմ ճակատին, հարթում է գլխիս մազերը—և բոլոր հոգսերս անհետանում են: Ես կատուի նման փաղաքշելով պտրտվում եմ նրա շուրջը, նա ծիծաղում է. յանկարծ լսում եմ, սիրոյ դրաւականը աղաղակում է,—մեր խաղը վերջացած է. ցանկանում ես սկսել նորից,—վերջացած է: Ամբողջ առաւօտը քարշ ես դալիս հաւատարմատարի հետ, ատտեսի հետ, ատտառապետի հետ: Նստում ես ճաշելու, հէնց որ կապում ես սեղանի անձեռոցիկը,—ես մէկ կապում եմ նրան հին սովորութեան համեմատ,—և ահա աղաղակում է իմ սիրոյ դրաւականը: Կինս հեռանում է սեղանի մօտից և ծիծ է տալիս նրան: Փոքր ինչ անցնում է, նա դարձեալ ինչ-որ մի այլ պահանջ ունի,—կինս կրկին վազում է նրա մօտ, իսկ ես ստիպված եմ ճաշել միայնակ, և տխրութիւնից սկսում եմ սուլել մի որ և իցէ երգ: Այդ ժամանակ ցանկութիւն ես զգում տանից դուրս գալ գոնէ բաղեր գնդահարելու համար: Ամբողջ օր թափառում ես, մինչև ծնկները խրված ջրի մէջ, և ուրախութեամբ սպասում ես լաւ անկողնի: Ի՞նչ էք անուանում դուք, օրինակ, լաւ անկողին: Ցայտնի բան է, լաւ գօշակ, փափուկ բարձեր, տաք վերմակ և գեղեցիկ կին:

Նա կարմրեց և ինչ-որ մրմրթաց:

(Կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

ԵՒ

ԳՈՐԾՔ ՆՈՐԻՆ·

պատմական և գրական քննութիւն.

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹԵԱՆ։

Ի Մոսկուա, 1883.

Գինն է 1 *ռ.* 50 *կ.* (*կամ* 5 *ֆրանկ*)։

Վաճառվում է „կենտրոնական գրավաճառանոցում։“

Արտասահմանից (Թիւրքիա, Եւրոպա) պատուիրողները կուղղուեն տիրապետ առ հեղինակն.—MOSKOU ruelle Armiansky, maison Cratchof.

4—5

ВЪ РЕДАКЦІИ

ГАЗЕТЫ „МШАКЪ“

ПРОДАЕТСЯ БРОШЮРА

НА РУССКОМЪ ЯЗЫКѢ

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОООЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Цѣна 25 копѣекъ.

Соч. Григорія Арцруни.

ՊԱՍՏԱՌ (*օրջ*) ՏԱՐՆՕՊՈԼ, *եղբայրների գործարանական* **ՊԱՀԵՍՏԻ** *մէջ։*

Լորիս-Մելիքովսկայա փողոց, տ. Զուբալովի, հոգևոր սեմինարիայի հանդէպ։

Ստացված է մեծ քանակութեամբ **ՊԱՍՏԱՌ** (*օրջ*) 12 *կոպէկից մինչև* 5 *ռուբլ* ՐՈՒԼՕ։

Քանակութեամբ գնողներին ԶԻՋՈՒՄՆ *կը լինի։*

2—25

ԼԵՒՈՆ ԽԱՆ-ԱՂԵԱՆՑ,

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։

Բերել եմ տալիս և սաղքում եմ ամենայն տեսակ գիւղատնտեսական մեքենաներ, ջաղացներ, ձիթահաններ, խիզարներ, շոգեշարժ մեքենաներ և այլն։ Ցանկացողներին սովորեցնում եմ նոցա բանեցնելու կերպը։ Պատկերազարդ ցուցակս մեքենաների, իրանց գներովը ուղարկում եմ ցանկացողներին ԶՐԻ։

Դիմել այս հասցէով. Въ Вагаршапатъ. Въ контору Эчміадзинской Паровой Маслобойни.

Л. Е. Ханъ-Агову.

4—10

ՌՈՒՍՈՒՅԻՉ—*ուման պատշաճաւոր վկայականներով—երեք տարի ուսուցչական պաշտօն վարելով էջմիածնի ճեմարանում ռուսաց լեզուից և ընդհանուր ու ռուսաց աշխարհագրութիւնից, նաև թուաբանութիւնից վաղարշապատի դպրոցում, ցանկանում է նոյն և ուրիշ առարկաներից դասեր ունենալ Թիֆլիսի կամ ուրիշ տեղերի հայոց միջնակարգ կամ ծխական դպրոցներից մէկում, չափաւոր ռոճիկով։ Պայմանների մասին դիմել այսպէս.* Тифлисъ, Старая Бебутовская улица, домъ № 10-й —Василію Бастамянъ. 3—5

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՉՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա։

Միակ գործակալութիւն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ**։ *Նոյն տեսակ ձեռագրեքանակութեամբ ամեն ձևի* 25% *ուրիշ տեղ։ Կան թուղթ, տետրակներ, քարեգրիչներ, քսակամաններ, մկրատներ, խալիչամահճակալ, վերհամար իրեր, գոներ,* ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, *բրիտանական մետալից իրեր,* ԼԱՊՏԵՐՆԵՐ, *գդալներ,* ԲԱԺԱԿՆԵՐ, *ջրամաններ, երես լուանալու ամաններ, ֆիլտրա, կրան, շվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօակա, գլխի, երկաթէ թելերից, ձիու համար։ Մակենաշներ։ Բժշկական թուղթ վատերկլոզատի համար և այլն և այլն։*

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ։

30—100

ԵՐԿԱԹԷ



ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ

Մի հոգու համար 8 *ռուբլուց, երկու հոգու համար* 14 *ռ., մահճակներ ծովային խոտով լցված* 6—9 *ռ.* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։** *Նոյն տեղը մեծ քանակութեամբ* ԱՄԱՆՆԵՐ, *դանակներ պատառաքաղներ և երկաթէ* ԳՐԻՉՆԵՐ, *կողպէքներ, թերիվ, աղամարդկերանց և կանանց* ԹԱՄԲԵՐ, *մատուցարաններ,* ԿԷՕՆԿԱ, *ըէվոլվերներ,* ՀՐԱՑԱՆՆԵՐ, *ալբոմներ, կոնֆեկտներ,* ԹԷՅ 1-*ին հունձի և այլն* 25% *աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղ։*

73—100

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԼՈՒԱՑԱՐԱՆ ԴԷՅԿԱՐԽԱՆՈՎԻ *Միխայլովսկայա փողոց,* № 69։ *Լուացքի մաքրութեան և գլխաւորապէս ամրութեան համար մանաւանդ հագուստների և վարագոյրների համար լուանում է* **ՇՈԳԻՈՎ**, *որ շատ գեղեցիկ հեռանքներ է ունենում։*

3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

„ՀԱՅՈՑ

առաջին ընդհանուր

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ“

Ծախվում է կենտրոնական և կովկասեան գրավաճառանոցում։

Գինն է 50 *կոպէկ։*

Կարելի է ձեռք բերել նաև աշխատասիրողից հետևեալ հասցէով.

Тифлисъ.—на Авлабарѣ. УЧИТЕЛЮ ОВАНЕСУ НАЗАРЯНЦЪ.

5—10

ՈՒՐԻՇ ՏԵՂԻՑ 25% **ԷԺԱՆ**

ցիտրատ-մագնեզիա, կաֆէ աղացներ, ութօներ, մահճակալներ, կարբոլեան փոշի տարափոխիկ հիւանդութիւնների դէմ, կլէօնկա, դանակներ և պատառաքաղներ, շչէօականեր, գրիչներ, **ԹԷՅ** 1-*ին հունձի։* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։**

5—10

ՎԱՐՁՈՎ *է տրվում մի* **ՄԵԾ** *և* **ԼՈՒՍԱՒՈՐ ՍԵՆԵԱԿ** *կոբասիքով, սամովարով և ծառայով։* **ԻՍԱՐԼՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ**, *տուն* № 9, **ՆԵՐՔԻՆ** *յարկ։*

Отдается одна **СВѢТЛАЯ, БОЛЬШАЯ КОМНАТА** съ мебелью, самоваромъ и прислугою. **Исарловская** улица, домъ № 9, **ПЯТЫЙ** этажъ.

ՎԻԷՆՆԱՅԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՄԱՆԻ

ԲԱԹՈՒՄ, ՏՈՒՆ ԹԱՑԻՐՕՎԻ

Մեծ քանակութեամբ ապրանքների պահեստ և վաճառատուն, ուր գտնվում են մեծ քանակութեամբ ամեն տեսակ կօշիկներ-ոտնամաններ, գուլպա-չուլքիք, հովանոցներ-զոնտիկներ, հագուստներ տղամարդի և կանանց, աղջուխներ-բաղդադիք կովկասի ճաշակով, շապիկներ, ժամացոյցեր, ոսկի և արծաթէ։ Ամեն տեսակ սպիտակեղէններ (շուշեղէն), որպէս են ստաքաններ, վազեր և այլն։ Նոյնպէս և դանակներ, պատառաքաղներ, գդալներ ֆրաժի ֆաբրիկից և հասարակ տեսակներից, կոճակներ, քաթանեղէն, գլխարկներ և այլն և այլն ամեն ապրանքից գտնվում են մեծ քանակութեամբ շատ տեսակներով։ Ծախվում են ֆաբրիկի գնով և առանց աւելցուկի (без-запроса)։ *Ընդունում է պատուէրներ օտար քաղաքներից ամեն տեսակ ապրանքների։*

Հասցէն БАТУМЪ, Мани, д. Таирова. ՄԱՆԻ

ԴԱԼԵՐԵԱ **ԱՐԾՐՈՒՆԻ**, ԳՎՕՐՑՕՎԱՅԱ ՓՈՂՈՑ

ՊԱՀԵՍՏ **ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.**

СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

№ 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ

Ծախվում են. մեծ քանակութեամբ և խիստ էժան, Վիէննայի ԹՕՆԷԹ *ֆաբրիկայի* ՄԷԲԵԼԻ *ամեն տեսակ, նոյնպէս* ՈՍԿԵԶՕԾ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ *հայելիների համար և* ՀԱՅԵԼԻՆԵՐ, *լուսանկարների համար* ԱԼԲՈՒՄԻ *թուղթ,* ԲԷԼԳԻՅԻ ԱՊԱԿԻՆԵՐ *պատուհանների համար, ամեն տեսակի, նոյնպէս* ՄԱՐՄԱՐԻՕՆ *քար,* ԹՈՒՋԵԱՑ ԱՄԱՆՆԵՐ *էմայլով,* ՆԻԹՐԱԹ ԴԱՐԺԱՆ, ՈՍԿԻ *և ուրիշ շատ ապրանքներ։*

ՅԱՌԱՋԻԿԱՑ 18$^{83}/_{84}$ *թ.* (ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

„ՎԱՐԺԱՐԱՆ“

Մանկավարժական ամսագիրը կը հրատարակուի նոյն դիրքով, նոյն ուղղութեամբ, նոյն ծրագրով և նոյն աշխատակիցների գործակցութեամբ։

Ամսագրիս ծրագիրը

ա. Ազգիս վեհափառ Հայրապետի և թեմական վերատեսուչների կարգադրութիւններն ազգային ուսումնարանների վերաբերութեամբ։

բ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ—*յօդուածներ մանկավարժական բովանդակութեամբ։*

գ. ԲՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ—*յօդուածներ ազգային պատմութեան, աշխարհագրութեան, գրականութեան, տոմսագրութեան և լեզուի վերաբերութեամբ։*

դ. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ—*քննական յօդուածներ դասագրքերի և մանկական ընթերցանութեան գրքերի։*

ե. ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ—զանազան տեղեկութիւններ ուսումնարանական կեանքից։

զ. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ—*վէպեր, զրոյցներ և այլն, մանկական ընթերցանութեան համար։*

է. Հանելուկներ, խնդիրներ և խաղեր մանկանց համար։

ը. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Բաժանորդների թիւը աւելանալուն պէս, ամսագրի չրջանը կընդլայնենք։

Տարեկան բաժանորդագինն է 5 *ռուբլի կանխիկ վճարելի։ Սակայն խմբագրութիւնս ի նկատի առնելով ուսուցիչների և առհասարակ ազգային պաշտօնեաների մեծ մասի նիւթական անապահով դրութիւնը, և դոցա գործը դիւրացնելու համար որոշել է, որ նոքա ստորագրուելիս մինչև Օգոստոսի* 15-*ը վճարեն* 2 *ռուբլի. Նոյեմբերին* 2 *ռ. և Փետրուարին* 1 *ռ.*

Տարին սկսվում է Օգոստոսին և վերջանում Մայիսին, տարին հրատարակելով տասը տետրակ։

Թիֆլիզում ստորագրուել կարելի է խմբագրատանը (Երևանեան հրապարակ, ռուսաց սեմինարիայի հանդէպ, տուն № 20 *Միրիմանեանցի) և պ. Եփրեմ Յատուրեանի լամպային մագազինում։ Օտարաքաղաքացիք դիմում են այս հասցէով* Въ Тифлисъ, Въ Редакцію педагогическаго журнала «Варжаранъ». Эриванская площадь, противъ русской Семинарій, № 20 домъ Мириманова. *Իսկ արտասահմանից՝* Tiflis (Caucase), Rédaction du journal pédagogique „Varjaran“.

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԽՈՍՐՈՎԵԱՆ։

4—10

ՎԻԷՆՆԱՅՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

„Ժուրնալ դ'Օրիան“ դադարեցրած թերթի տեղ է հրատարակվում այդ նոր լրագիրը։ „L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 *ռուբլ է, կէս տարվանը* 4 *ռուբլ։*

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէննայում գիմելով այս հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Дозволено цензурою, Тифлисъ, 29 Іюля 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.